

Յաստուածապա՛հ զաւառիս Լաւոյ, ի յերկնագէտ, մեծարգոյ եւ ի զերահուշակ ուխտի Սանահին վերաձայնելոյ... Յիշեցէք... զտէր Կիրակոս կաղմող, եւ զանպիտանս յամենայնի զՅոհանէս, որ յոյժ աշխատեցաք ի զիր եւ ի ծաղիկ եւ ի համարար բառսն... Այլ եւ սղալանաց եւ խոշորութեան զրոյս անմեղադիր լերուք, զի այս էր կար մեր ի ժամ ծերութեան»:

Զեռազրի վերջում գտնուում է մի մազաղագիտայ պահպանակ (Ժ. դարի դրոշմ ունի), առաջին էջի վրայ բարձրորակ եղծած մանրանկարը պատկերում է Յիսուսի մուտքը Երուսաղէմ: Իշու վրայ նստած Քրիստոսի կերպարը եւ առաջից ներք զլամաւորողները, որոնք ճանապարհին ըզգեստներ են փոռում, ինչպէս նաեւ ուղեկիցները, զծած են հմուտ վրձինով:

Ահա սրանք են Յովհաննէս Սանահնեցու զրչական եւ մանրանկարչական մշակոյթի մեզ ծանօթ վաստակները, որոնք հայ արւեստի պատմութեան համար արժէքաւոր վաւերագրեր են եւ նկարչի պայծառ յիշատակը վառ են պահում զեղարւեստասէրների սրտերում:

Մի հանգամանք անժխտելի է, որ Յովհաննէս Սանահնեցին իր զեղարւեստական գործունէութեան ընթացքում օգտուելով հայ զրչական եւ մանրանկարչական հին

մշակոյթի հարստութիւններից, կերտել է նկարչական արւեստի ուշագրաւ գործեր: Ուշագրութեան արժանի են նրա վրձինած կերպարները եւ ոճային երանգաւորումները, որոնք ձեզ ցայտուն պաղաւար են տալիս վաստակաւոր նկարչի արւեստի էութեան եւ Սանահնի մանրանկարչական զպրոցի զեղարւեստական առանձնայատկութիւնների մասին: Առհասարակ, Յովհաննէս Սանահնեցին ձեզ զբաւում է իր ձեւակերպւած վրձինով եւ ինքնատիպ ոճով: Այդ հիմնական յատկանիշներով էլ նա ԺԵ. դարի հայ զրչական եւ նկարչական արւեստների պայծառ զէմքերի շարքում ուրոյն տեղ է զբաւում (*):

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

4 փետր. 1957

Ռաշտ

(*) Աղբիւրներ. — Գարեգին եպ. Սրբանձատեանց, «Դրոց բրոց». Գարեգին եպ. Յովսէփեան, «Գրքութեան արւեստը հին հայոց մէջ». Հ. Ղեւոնդ Ալիշան, «Սիսական». Լ. Ս. Խաչիկեան, «ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ». Նորայր եպ. Պողարեան, «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց» եւ այլն: Ար. Եր.

ՈՂԲ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ԿԱՖԱՅՈՒ

Ինչն հարիւր Հայոց թուին,
ԻԳ (24)ն էր աւելին, (1475)
Ի յաստմանէ մեղաց չարին,
միաբանեցան այն տաճկնին:
Թաթարն եկաւ ի վերայ Կաֆին,
ջրեր զամէնն կտրեցին,
Կրուի տըւին հետ քաղաքին,
եւ շատ արիւն յերկիր հեղին:
Յետոյ եկին զատրըղանին,
որ ԴՃ (400) էր աւելին,
Եւ միաբան ի դուրս ելին,
զԿաֆայ քաղաքն բոլորեցին:
Բազում 'ւ անթիւ էր հեծելնին,
թօփ ու թուֆանք շատ ունէին,
Խիստ կանչելով կռիւ գային,
որ ահ նստեր ի վերայ քաղքին:
Մեծ մեծ թօփերն երբ քաշէին,
երկինք 'ւերկիր կու դողային,
Խիստ շատ վնաս եղեւ քաղքին,
տուն եւ տաճարքն փլուչէին:
Տըղայք մեռան յահէ ձայնին,
կանայք յահէն զարհուրէին,
Եւ ըզտըղայսն անցուցանէին,
զի ահեղ էր ձէնն մեծ թօփին:
Ի հինգ աւուրն զքաղաքն առին,
եւ սուտ երգումն աստ արարին,
Յետոյ զքաղաքն ի զիր առին,
ըզմանր ու զմեծն զրեցին:
Զինչ որ ճէպայեարախ կային,
զամէնն ի քաղաքէն ժողովեցին,
Զնետ ու զաղեղ եւ զասպարնին,
զամէնն առեալ կողոպտեցին:
Դարձեալ խարած շատ մի առին,
չատոց զմորուքն կտրեցին,
փայտով զմարդիքն ջարդեցին,
զղուստր եւ զորդիքն ժողովեցին:
Զհաւըն զլուխն կտրեցին,
զորդիքն առին եւ զերեցին,
Անխնայ ժողովեցին,
զերկու եղբարքն ի մէկ տեղին:
Զնոր պըսակած հարսն ու փեսան,

լալով առին ի նալ դրին,
Հայրն ու մայրն շատ լացին,
եւ զլիւրաց ի հետ գնացին:
Նայ ճար չեղօ(աւ) չի խղճացին,
եւ ոչ լալուն ողորմէին,
Սրտերն եղեր էր զաղանի,
զանմեղ գառինքն ուտէին:
Առին տարան զատրըղանին,
լալով լըցին ի մէկ տեղին,
Տղայքն ամէն խիստ կուլին,
եւ հաց եւ ջուր կու կանչէին:
Ծընօղքն ամէն ժողովէին,
եւ կերակուր յուղարկէին,
Լալով նստին յեղեր ծովին,
ողորմ նային ի դէմ նավին:
Քառասուն աւր ի վերայ ծովին,
աղաղակն ի դէմ քաղքին,
Շատ աղչըրներ եւ ծառանին,
զամէնն առին ի մէկ տեղին,
Տասըն հազար աղայս առին,
զարդ ըզճառայքն եւ զաղչըրնին:
Զպղըրկընէրն ժողովեցին,
զամէնն խիստ թալնեցին,
Շատ մի ուղաթ յառաջ տարին,
այնով չեղեւ բնութիւն չարին:
Զար հրամանք յառաջ հանին,
որ չի պահէր զումաշ նոցին,
Ըզգանկակնին ժողովեցին,
մինչ ի Ռ (1000)ըն հասուցին:
Առեալ տարան յըմտամպօլին,
ի մեծ պարոնըն հասուցին,
Զժամու զաղաւթը խափանեցին,
Սանթայ Մարիամն որ կու գովին,
Ըզֆոռանկաց եկեղեցին,
այնայ մըղկիթ գայն արարին,
Զինչ որ Փրոանկ կայր քաղաքին,
զամէն Ստամպօլ առեալ տարին,
Զի նոր դարձուած ի հոն կացին,
զամէնն նոր տաճկացուցին,
Խիստ միտեցան եւ յետ կացին,
եւ անումիտ ի վայր մնացին:

Ամէն մարդոյ հառկացուն,
 զինչ որ ընդակ կայր զըրեցին,
 Զկրկնոց ճիւղերն ի զիր առին,
 զտուն եւ զայգի ի զին բոնեցին,
 Զերեք բաժին կ'ուզէին,
 աղաչանաւք ըզկէսն առին:
 Խիստ նեղութիւն վայր քաղաքին,
 ամէնն ի լաց հառաչէին,
 ծանախ չկայր որ փաղչէին,
 զինչ գերութիւն փարաւոնին:
 Ըզժողովուրդըն տանջէին,
 յանկարիսս կու տանէին,
 ի կեր 'ւ ի քար բանեցնէին,
 ձեռներ 'ւ ոտով արիւնէին:
 Լալով ըզքարն կըրէին,
 չիթախն ի հետ կու ծեծէին,
 Սարկաւաղներն եւ ուսածնին,
 Երիցութեան արժան էին:
 Փիլիսոփեյքն եւ քահանայք,
 Երիցորդիք եւ խոճանին,
 Զամէնեան լալով առին,
 'ւ ի հաւատոցն հանեցին:
 Ով զիս յիշէ պահ մի բարին,
 զլարիկ ՆԵՐՍԷՍՍ ի սեղանին,
 Բոլոր սրտիւ հայր մեր յերկին,
 Իւր ասօղին մեղքըն չիւլին:

Արտագրուած Սաղեմի քիւ 1455 ձեռագրէն: Տաղարան Ստեփաննոս Թախաբեցիի, էջ 233:

Ղարիպ Ներսէս տաղասացս, որ այլուստ ինծի անծանօթ կը մնայ, ահանատես եղած է Կաֆայի (Թէոդոսիա կամ Ֆէոդոսիա) զրաւումին եւ ասերման թուրքերէն:

Հ. Մինաս Վ. Բժշկեան իր ճանապարհորդութիւն ի Լեհաստան (Վենետիկ, 1830, էջ 338-9) գործին մէջ արտագրումներ կ'ընէ Պատմութիւն Անեցոց Բէֆէի ժամանակագրութենէ մը, որուն մէջ Կաֆայի 1475 թուրքերէն զրաւման մասին կը կարդանք.

«Ոխացեալ խանն (Թաթարաց Ղըխու) զեսպան առաքէ առ սուլթանն թուրքաց

զալ ի յօղնութիւն ենթ պայմանիս ախորիկ՝ առելով թէ քաղաքն ձեզ լիցի եւ զորդին իմ ինձ. իսկ թուրքն ԳՃ (300) նաւօք ընդ ծովով եւ ինքն ընդ ցամաքիւ պաշարեցին զՖէօդոսիա. յայնժամ ընդ իմացան իշխանքն եւ աղնուականքն մեր եւ ոչ ետուն զբերդն: Ապա թուրքն ուխտ եղեալ ընդ Հայոց չմեղանչել եթէ հնազանդեացին, այլ ազատութիւն տալ: Տեաեալ իշխանաց մերոց եւ աղնուականց զթուրութիւն իշխանին ջինիւնդաց եւ զօրացն նոցին. մանաւանդ թէ իշխանն փախուստ էառ, անճար մնացեալ ի սովու, առին զերդումն եւ զքաղաքն ետուն թուրքաց. զայս եղեւ ԶԻԴ (1475) թուին»:

«Իսկ թուրքքն զկնի սուղ ինչ ժամանակաց ստեցին երդմանց եւ պայմանին իւրեանց՝ հանապաղ հարկադրէին իշխանաց մերոց եւ աղնուականաց՝ դառնալ ի կրօնս մահմետական. զի զիւրաւ նուաճել զմնացեալ գոհնէին: Բաղումս Կէտիկ Ահմէտ զարիտան փաշայն բռնադատէր եւ բաղմիցս ի ճաշ եւ ի ընթրիս հրաւիրեալ զպատասխանս խնդրէր դառնալ ի հաւատոց. եւ իշխանքն մեր պատասխանեն՝ թէ եթէ բռնութեամբ եւ կամ սրով կոտորես զմեզ, մեք յօժար եմք փոխել զկենցաղս զայս ընդ յաւիտենականի, քան թէ զըրիտունէական կրօնն ընդ մահմետականի. զի մեք չեմք վաճառօղ կամ փոխօղ հաւատ ընդ հաւատոյ. այլ սէր ընդ բարեկամի, եւ բարեկամ ընդ սիրոյ: Եւ յետ բաղում հարցմանց եւ պատասխանատուութեանց կըրկին Կեղծեալ բարեկամացան. բաղմիցս իրրեւ զսէր ցուցանէր իշխանաց եւ աղնուականաց մերոց, եւ ասէր այսուհետեւ ոչ է պատեհ ձեզ սուր ընդ մէջ կապեալ առ իս զալ ի ճաշ, կամ ընթրիս. այլ առանց սրոյ, եւ այլ բաղում բանիլ»:

«Յաւուր միում հաւատացեալ իշխանաց մերոց՝ բանիցն փաշային եւ մանաւանդ անճար մնացեալ՝ ըստ հրամանի նորին զնացին առանց սրոյ ի ճաշ առ փաշայն. զի էր բնակութիւն նորա իսկէլէ զարուսին ի վերայ չորրորդ դատիկոնի պալատին:

յետ ճաշելոյ նոցին ի յիշանէին ի ձիգ ձիգ աստիճանսն պալատին՝ դահլճքն ըստ հրամանի փաշային՝ մի մի կոտորեալ արկին ի ծով: Այսպէս իշխանազունք մեր եւ աղնիւք կատարեցան ի Գրիստոս. ապա հրամայեաց թուրքաց եւ թաթարաց կոտորել զամենայն ազգս Հայոց, որք ի նրմին աւուր բաղմամարդ քաղաքն Ֆէօդոսիա սակաւարեակ արարին, զի զծերս ու զտղայս, զարս եւ զկանայս սրոյ ճարակ ետուն եւ զարիւնս նոցա ի յերկիր հեղեալ իրրեւ զլտակս գետոց ընթանայր ի փողոցն. անթիւ աղջիկք եւ մանկունք եւ մատաղ տղայք գերեալ առաքեցին ի Պոլիս առ սուլթանն. զսոյնս արարին ի Կալարաթ եւ ի Սուրիաթ»:



Կաֆայի թուրքերէն զրաւման այս երկու յիշատակարանները, մին ժամանակակից, իսկ միւսը Ժէ. զարուն պատրաստուած, տարբեր՝ այլ զիրար ամբողջացնող տեղեկութիւններ կու տան:

Թուրքերը երեք հարիւր (ըստ յիշատակարանին) կամ չորս հարիւր (ըստ տաղին) նաւերէ բաղկացեալ նաւատորմիւով մը Կաֆայի վրայ վու գան: Հինգ օրուան մէջ (ըստ տաղին) քաղաքը կը զրաւեն: Գրաւումը սակայն այդքան կարճ ժամանակի մէջ կը յաջողի՝ ըստ յիշատակարանին՝ որովհետեւ Կաֆայի հայ իշխանները հաւատք ընծայելով այդ «սուտ երդում»ին (ըստ տաղին) կը դադրին քաղաքը պաշտպանելէ եւ քաղաքը կը զրաւուի:

Յիշատակարանը կը ջանայ արդարացրենել Հայոց թրքաց հետ պայմանաւորուելը եւ քաղաքը չպաշտպանելը՝ ըսելով որ հայերը «անճար մնացեալ ի սովու» նաեւ ձենովացիներու իշխանին եւ իր զօրքերուն «թուրութիւնը» եւ ձենովացիներու իշխանին «փախուստը» յուսահատեցուցին

հայերը եւ անոնք «զքաղաքն ետուն թուրքաց», ըստ յիշատակարանին: Պարզ է որ Կաֆայի հայերը լքած կ'երեւան քաղաքին պաշտպանութիւնը եւ թուրքերու հետ կողմնակի համաձայնութեան գալով՝ քաղաքը վը յանձնեն թշնամիին:

Այս դաւաճանական արարքին համար յիշատակարանի ն պաշտպանողականը զժբախտարար շատ տկար է: Նախ հինգ օրուան պաշարմամբ զժուար է թէ Կաֆան սովահար եղած ըլլայ: Տաղին մէջ կը պակսի որեւէ յիշատակութիւն՝ ձենովացիներու իշխանին Կաֆայէն փախչելուն մասին: Հետաքրքրական է թէ ո'ւր կրնար փախչիլ ձենովացին՝ երբ Կաֆան ծովով ու ցամաքով պաշարուած էր: Ոչ ալ հաւանական է որ ձենովացի պահակազօրքը չուզէր կոռլիլ՝ քանի որ քաղաքին պաշտպանութեան հետ կապուած էր իրենց կեանքի գոյութիւնը: Տաղը կը վկայէ որ անոնք գերուեցան ու Պոլիս տարուելով իսլամացուցին, հաւանաբար Ենիշէրինեբու մէջ առնելով:

Այսպէս Կաֆան քարուքանդ եղաւ: Տեղւոյն հայութիւնը դառն կերպով պատժուեցաւ կեղծիքին հաւատալու միամտութիւնը ունենալուն համար:

Հոս առաջին անգամ մեր այս հրատարակած տաղը ժամանակագրական արժէքաւոր կոտոր մըն է Կաֆայի զրաւման (1475) մասին:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ՕՏԱՐ ԲԱՌԵՐ ՏԱՂԻՆ ՄԷՁ

Ղաւորդա - ուղղման: Թօփ - Թնդանօթ: Թուփանք - հրացան: ձէպայեարախ - ուղղամթերք: Խարած - հարկ: Պաղըրկեան - վաճառական: Ուաթ - դաշինք: Ղումաշ - լաթ: Ըղդակ - տղրանք: ձիհեզ - օփիտ: Յանկարիա - անվարձք աշխատանք: